



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 նոյեմբերի 2013 թվականի N 1283 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՄԻ 25-Ի N 856 - Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի
«Տեսչություններում կառավարման խորհուրդներ ստեղծելու մասին» N 856-Ն որոշման
մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման հավելվածի 8-րդ կետում՝

ա. առաջին նախադասությունից հանել «Բողոքարկման հանձնաժողովին» բառերը,

բ. երրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հանձնաժողովը դիմում-բողոքները քննության է առնում և դրանց վերաբերյալ
եզրակացություն է տալիս 30 օրվա ընթացքում:»,

գ. չորրորդ նախադասությունում «տեսչության ղեկավարի» բառերը փոխարինել
«հանձնաժողովի» բառով,

դ. հինգերորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բողոքարկման հանձնաժողովը նիստի ավարտից հետո տալիս է եզրակացություն,
որի հիման վրա տեսչության պետը նույն օրն ընդունում է որոշում դիմում-բողոքը բավա-

րարելու կամ մերժելու վերաբերյալ: Հանձնաժողովի եզրակացության մեջ հստակ նշվում է հանձնաժողովի հիմնավորված դիրքորոշումը դիմում-բողոքի բավարարման կամ մերժման վերաբերյալ:».

2) որոշման հավելվածի 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17. Խորհրդի լիազորությունների իրականացմանն ուղղված գործողությունների կատարման ապահովման նպատակով խորհրդի քարտուղարությունն իրականացվում է տեսչության կողմից:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2013 թ. նոյեմբերի 26
Երևան



Տ. ՍԱՐԳՍՅԱՆ